



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՐԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-
ՏԻՏԵՍՎԱԿԱՆ ԻՐԱՎԻԾԱԿԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրազդան 2017

Մարզկենտրոն - Հրազդան

Համայնքներ - 42

Բնակչությունը - 251900
քաղաքաբնակներ - 137200
գյուղաբնակներ - 114700

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ՄԱՍԻՆ**

Բովանդակություն

Ներածություն	2
Կորպայի մարզի բնագետական և ժողովրդագրական նկարագիրը	2
Արդյունաբերություն, սպասարկման ոլորտ և գրուաշրջություն, ներդրումային ծրագրեր	2
Ֆինանսական քնազական	4
Տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների գործադրային ծառայությունների գործունեության համակարգում	5
Կրթություն	8
Մշակույթ և սպորտ	9
Սոցիալական ապահովություն	11
Առողջապահություն	12
Երեխանների իրավունքների պաշտպանություն	13
Հողաշինություն և հողօգտագործում	14
Գյուղականգործություն և բնապահպանություն	15
Քաղաքաշինություն	18
Տեղեկագիրություն և հասարակայնության հետ կապեր	21
Ներքին առողջիք	22
Փաստաթղթաշրջանառություն, քաղաքացիների ընդունելություն	22
Կադրային աշխարհանք և իրավաբանական հակողություն	23



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մարզպետարանի աշխատանքային ծրագրերով, ինչպես նաև մարզի զարգացման գերակայություններից բխող նախաձեռնություններ:

Աշխատանքների հիմնական առանցքային ուղղություն է համարվել մարզային տարբեր բնագավառների ու ենթակառուցվածքների արդյունավետ գործունեության ապահովումը և արդիական մտածողությանը հարիր նոր որակի գործընթացների կազմակերպումը:

2017 թվականի ընթացքում ևս << Նախագահի և Կառավարության ծրագրային առաջնահերթությունների շրջանակներում, պետական համակողմանի աջակցության արդյունքում մարզում կատարվել են զգալի աշխատանքներ, որոնց արդյունքում լուծումներ են ստացել բազում հրատապ խնդիրներ ու նպաստել մարզի զարգացման ռազմավարության դրույթների պատշաճ իրագործմանը:

Շարունակաբար ապահովվել է մարզի համայնքների, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային այլ կառուցների հետ անհրաժեշտ համագործակցությունն ու համատեղ աշխատանքների կազմակերպումը:

Տարվա ընթացքում կազմակերպված քաղաքացիների ընդունելությունների, համայնքներ կատարվող այցելությունների ընթացքում բնակչության հետ ունեցած շփումների ձևաչափերում մարզի ազգաբնակչության կողմից արտահայտված կարծիքների ներառմամբ կայացվել են հանրային կարևորություն ունեցող որոշումներ և ներդրվել տարբեր ասպարեզներում:

Նորովի մեթոդաբանություններ են կիրառվել մարզային ենթակայության կազմակերպությունների աշխատանքների արդյունավետության շարունակական բարձրացման ուղղությամբ:

Տարեկան գործունեության դիտարկման ու վերլուծության արդյունքում մշակվել են նաև հաջորդ տարվա համար նախատեսվող ծրագրերն ու նախաձեռնությունները:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կոտայքի մարզի բնակչության թվաքանակը 2017թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 251900 մարդ, որը հանրապետության բնակչության 8.5%-ն է: Քաղաքաբնակներ են 137200-ը (54.5%), գյուղաբնակներ՝ 114700-ը՝ (45.5%):

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ /կարեկան դրվագները կներառվեն <<ԱՎԾ կողմից հրապարակման արդյունքում/

2017թ.9 ամսվա ընթացքում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 114.9 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 85.1 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն ավելացել են 35.0 %-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալների ավելացումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էլեկտրաէներգիայի արտադրության և մշակող արդյունաբերության ցուցանիշների ավելացմամբ: Այսպես, 2017թ. 9 ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը կազմել է 45.1 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 16.7 մլրդ. դրամով կամ 58.7%-ով: Հաշվետու ժամանակահատվածում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 67.0 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 13.3 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 24.9%: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում սննդամթերքի (11.3%), խմիչքների (66.4%), դեղագործական արտադրանքի (55.0%), կաշվե արտադրատեսակների



(6.0%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (25.8%), հիմնային մետաղների (2.8%) արտադրության ճյուղերում: Հանքագործական արդյունաբերության ոլորտում հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է նվազում. արտադրության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 369 մլն. դրամի չափով (նվազում՝ 16.6%) կամ արտադրվել է 1.8 մլրդ. դրամի արտադրանք:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները հաշվետու ժամանակահատվածում ավելացել են 33.6 %-ով կամ իրացվել է 113.8 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 85.2 մլրդ. դրամի դիմաց:

2017թ. 9 ամսվա ընթացքում արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 86.0 մլրդ. դրամ, իսկ արտաքին շուկայում՝ 27.8 մլրդ. դրամ, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ արտահանվել է 15.8, այլ երկրներ՝ 12.0 մլրդ. դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 55.8 %-ով:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Մանրածախ առևտորի շրջանառության ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 45.2 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 1.4 մլրդ. դրամով կամ 3.0%-ով:

Բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 77.5 մլրդ. դրամ, որը նույն է, ինչ նախորդ տարվա ցուցանիշը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջությունը կարևոր տեղ է զբաղեցնում Կոտայքի մարզի տնտեսության մեջ: Մարզի զբոսաշրջության հիմնական կենտրոններն են՝ Ծաղկաձորի, Աղավնաձորի, Մարմարիկի, Հանքավանի, Աղվերանի, Արգնիի հանգստյան գոտիները, Գառնի, Գեղարդ, Բցնի պատմամշակութային վայրերը: Մարզում գործում են ավելի քան 75 հյուրանոցային և հանգստի կազմակերպման համալիրներ, զբոսաշրջության համար առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Ընդ որում տարեցտարի ընդլայնվում և նորացվում է հյուրանոցային և հանգստի կազմակերպման համալիրների ցանցը:

2017թ. 9 ամսվա ընթացքում մարզ այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է ավելի քան 405 հազար մարդ՝ նախորդ տարվա 338 հազարի դիմաց, կամ աճը կազմել է 19.8 %:

Մասնավոր միջոցներով իրականացված ներդրումային ծրագրեր

2017թ. մարզի 26 համայնքում (Զորացյուր, Քանաքեռավան, Գառնի, Քասախ, Գեղարդ, Ծաղկաձոր, Հրազդան, Աբովյան, Նոր Հաճն, Կամարիս, Արգական, Նոր Գեղի, Գեղադիր, Վերին Պտղնի, Եղվարդ, Արամուս, Քարաշամբ, Գողթ, Հանքավան, Մեղրաձոր, Աղինջ, Բալահովիտ, Ալահարս, Կարենիս, Արագյուղ, Զորավան) մեկնարկել է **105** ներդրումային ծրագիր՝ **63.3** մլրդ. դրամ արժեքով, որոնց իրականացման արդյունքում կստեղծվի 2622 աշխատատեղ: 30.12.2017թ. դրությամբ նշված ծրագրերի իրականացման համար արդեն ծախսվել է **48.3** մլրդ. դրամ, արդյունքում ստեղծվել է ավելի քան 1400 նոր աշխատատեղ: Ընդ որում **17.5** մլրդ. դրամ ներդրվել է արդյունաբերության, **12.9** մլրդ. դրամ՝ գյուղատնտեսության (ջերմոցներ, ինտենսիվ այգիներ, կոռուպերատիվներ), **2.0** մլրդ. դրամ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, **10.9** մլրդ. դրամ՝ զբոսաշրջության (հյուրանոցներ, հանգստի գոտիներ), **197.0** մլն. դրամ՝ էներգետիկայի ոլորտներում (արևային կայաններ, էներգախնայողական ծրագրեր), ինչպես նաև **3.9** մլրդ. դրամ՝ առևտորի և **890.0** մլն. դրամ՝ սպասարկման օբյեկտների կառուցման համար: Նշված 105 ծրագրերից ամբողջությամբ ավարտվել են **52**-ը (գումարը՝ **22.6** մլրդ. դրամ), իսկ մնացած 53-ը կշարունակվեն 2018 թվականին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

Ղեկավարվելով ՀՀ օրենքներով, կառավարության որոշումներով ու նորմատիվ այլ ակտերով՝ մարզպետարանն ապահովել է պետական բյուջեից հատկացված միջոցների տնօրինման և դրանց նպատակային օգտագործման հսկողության գործընթացը:

2017 թվականին սահմանված կարգով և ժամանակին իրականացվել է պետական բյուջեից մարզային ենթակայության կազմակերպություններին նախատեսված ծախսերի ֆինանսավորումը:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2017 թվականին բյուջեով 11 ամսում նախատեսված 6 միլիարդ 184 միլիոն 308 հազար 600 դրամի դիմաց ծախսվել է 6 միլիարդ 175 միլիոն 101 հազար 400 դրամ։ Կատարվել է շուրջ 10 միլիոն դրամի տնտեսում։

Մարզպետարանի աշխատակազմի պահպանման համար նախատեսված 526 միլիոն 777 հազար դրամից ծախսվել է 521 միլիոն 819 հազար դրամ, մնացած 4.9 միլիոն դրամը տարբեր հոդվածներով կատարված տնտեսման արդյունք է։ Փաստացի ծախսը 2016 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 1.7%-ով, կամ մոտավորապես 8 միլիոն 819 հազար դրամով, որը հիմնականում աշխատավարձերի բարձրացման արդյունք է։

Հանրակրթական դպրոցների պահպանման համար նախատեսված գումարները իրացվել են 100%-ով։

Մշակութային միջոցառումների անցկացման համար հատկացված 2 միլիոն 400 հազար և ժողովրդական գործիքների ուսուցման ծրագրով նախատեսված 67 միլիոն 484 հազար դրամը ամբողջությամբ իրացվել է։

Մարզային ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծրագրով նախատեսված 106 միլիոն 485 հազար դրամից ծախսվել է 106 միլիոն 317 հազար դրամ։ Նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ ծախսը ավելացել է 17 միլիոն դրամով կամ 19%-ով։

Հաշվետու տարում զգալի աշխատանք է կատարվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ։ Նախատեսված 2 միլիարդ 501 միլիոն 979 հազար դրամի դիմաց հավաքագրվել է շուրջ 2 միլիարդ 684 միլիոն 960 հազար դրամի սեփական եկամուտ /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրք, պետական տուրք և հողի ու գույքի վարձակալական վարձավճար և այլ սեփական/ կամ եկամուտների պլանը կատարվել է 107.3%-ով։ Նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ ավել է հավաքագրվել շուրջ 646 միլիոն դրամ։

2017 թվականի 11 ամսում ֆինանսական համահարթեցման սկզբունքով նախատեսված դուտացիան կազմել է 3 միլիարդ 877 միլիոն 500 հազար դրամ, որն ամբողջությամբ իրացվել է։

Մարզի համայնքները և ենթակա հիմնարկները 2017թ. 11 ամսում աշխատավարձի և սոցվճարների գծով պարտքեր չունեն։



ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱԿԱՊԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

<<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> <<օրենքի 2017 թվականի հունիսի 9-ի փոփոխություններով 31 համայնքների(Բյուրեղավան, Զրաբեր, Նուռուս, Չարենցավան, Ալավարս, Արգական, Բջնի, Կարենիս, Ֆանտան, Եղվարդ, Արագուտ, Բուժական, Ջովունի, Ջորավան, Սարալանջ, Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան, Մարմարիկ, Ակունք, Չառ, Ջովաշեն, Կապուտան, Կոտայք, Հատիս, Նոր գյուղ, Սևաբերդ, Ջրվեժ, Ջովրաղբյուր) միավորմամբ կազմավորվել են 6 խոշորացված համայնքներ(Բյուրեղավան, Չարենցավան, Եղվարդ, Մեղրաձոր, Ակունք, Ջրվեժ):

2017 թվականի հունիսի 18-ին կազմակերպվել և անցկացվել են Նոր Հաճն, Պոռշյան համայնքների ղեկավարների, իսկ նոյեմբերի 5-ին՝ Բյուրեղավան, Չարենցավան, Եղվարդ, Մեղրաձոր, Ակունք, Ջրվեժ համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների ընտրություններ:

2017 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում մարզպետն այցելել է մարզի բոլոր համայնքներ, ուսումնական և առողջապահական կազմակերպություններ, որոնց արդյունքում լուծվել են մի շարք համայնքային խնդիրներ և հարցեր:

2017 թվականին վարչության կողմից նախապատրաստվել են մարզպետի 38 որոշումների նախագծեր:

Մարզպետարանի կողմից << կառավարության մի շարք որոշումների նախագծերի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ:

I. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱԿԱՊԱՎԱՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> <<օրենքի համաձայն մարզի համայնքներում 2017 թվականի ընթացքում կայացվել են ավագանու՝ 2989, համայնքի ղեկավարի՝ 10307 որոշումներ:

Մարզպետարանի այլ ստորաբաժանումների հետ համատեղ կատարվել է ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումների իրավական հսկողություն, որոնց արդյունքներով ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ 278 գրություններ են ներկայացվել համայնքների ղեկավարներին: Արդյունքում նշված որոշումները համապատասխանեցվել են գործող օրենսդրության պահանջներին:

Համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարներին և մասնագետներին պարբերաբար տրվել է մեթոդական խորհրդատվություն:

Վարչական հսկողություն

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի հունվարի 12-ի՝ <<Վարչական հսկողության 2017 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> N 5-Ա հրամանի համաձայն նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 24 համայնքների ղեկավարների և ավագանիների 2014-2017 թթ. գործունեության նկատմամբ:



Հսկողության արձանագրությունները սահմանված կարգով տրվել են համայնքների ղեկավարներին և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Մարզի խորհրդի նիստում կատարվել են վարչական հսկողության արդյունքների քննարկումներ:

Համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների նկատմամբ իրականացվել է վերահսկողություն:

Վարչական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների շտկման նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկատվությունները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Վարչական հսկողության արդյունքները հրապարակվել են մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Առևտրի և ծառայությունների մատուցման բնագավառ

2017 թվականին համայնքներում իրականացվել է առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների իրականացման հսկողություն: Համայնքների ղեկավարների կողմից մարզպետարան ներկայացված եռամսյակային հաշվետվություններն ամփոփվել են և կիսամյակի կտրվածքով ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Մարզի համայնքներում 2017 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ գործունեություն են իրականացրել 1675 առևտրի, 266 հանրային սննդի, 310 կենցաղային ծառայության օբյեկտներ: 2017 թվականի ընթացքում ստուգումներ են կատարվել 780 առևտրի, 108 հանրային սննդի, 48 կենցաղային ծառայության օբյեկտներում:

Համայնքային ծառայություն

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով մարզի 42 համայնքապետարանների աշխատակազմերի պաշտոնների անվանացանկերով հաստատվել է համայնքային ծառայության 496 պաշտոն, որոնցից զբաղեցված են 288-ը, թափուր են 208 հաստիքներ: 167 թափուր հաստիքներն առաջացել են 2017 թվականի նոյեմբերի 10-ից վերակազմակերպման արդյունքում խոշորացված Չարենցավան, Եղվարդ, Բյուրեղավան, Մեղրաձոր, Ակունք, Զրվեժ համայնքապետարանների աշխատակազմերում: Առաջիկա մեկ ամսվա ընթացքում կհայտարարվեն մրցույթներ աշխատակազմերի համալրման նպատակով:

Համայնքային ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար 2017 թվականի ընթացքում հայտարարվել է 38 մրցույթ, որոնց արդյունքներով պաշտոնի են նշանակվել 28 անձ, 10 մրցույթներ չեն կայացել դիմորդներ չինելու պատճառով:

Հերթական ատեստավորում են անցել 41 համայնքային ծառայողներ:

Հերթական վերապատրաստում են անցել 60 համայնքային ծառայողներ:

Կոտայքի մարզում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվել է և յուրաքանչյուր ամսին հաջորդող ամսի մինչև 5-ը ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Համայնքապետարանների աշխատակազմերում առկա համայնքային ծառայության թափուր պաշտոններն օրենքով սահմանված մրցութային կարգով համալրելու նպատակով հայտարարված



մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորման օրերի ժամանակացույցերը յուրաքանչյուր ամիս ներկայացվել են << տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, իսկ մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են մարզպետարանի ինտերնետային կայքում:

II. Հանրապետական գործադիր մարմինների համակարգում

Պաշտպանության բնագավառ

2017 թվականի գորակոչերը բարձր մակարդակով կազմակերպելու համար Կոտայքի մարզպետի կողմից կայացվել են 2017 թվականի ամառային և ձմեռային գորակոչերը կազմակերպելու, ինչպես նաև 2017 թվականին գորակոչային տեղամասերում կցագրում կատարելու մասին որոշումները:

Զորահավաքային նախապատրաստության աշխատանքների բնագավառում մարզպետարանի աշխատակազմն առաջնորդվել է << Նախագահի հրամանագրերով՝ կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով՝ համագործակցելով բնագավառի լիազոր մարմինների, ինչպես նաև գործադիր իշխանության այլ մարմինների հետ:

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառ

Մարզպետի 17.01.2017թ. N 1-Ա որոշմամբ հաստատված <<<< Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլանով>> նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ իրականացվել են:

Մարզը մասնակցել է << ԱԻՆ փրկարար ծառայության կողմից անցկացված 1 հրամանատարաշտաբային ուսումնավարժության:

ՔՊ ծառայությունների հետ անցկացվել է 2 շտաբային, 1 ցուցադրական հատուկ տակտիկական, 5 հատուկ տակտիկական ուսումնավարժություն և 2 օբյեկտային վարժանք:

Մարզի 30 համայնքներում անցկացվել է շտաբային ուսումնավարժություն:

Մարզպետարանի և մարզպային փրկարարական վարչության կողմից անցկացվել է քաղաքացիական պաշտպանության օրվա կապակցությամբ 7 և ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ 5 հատուկ տակտիկական ուսումնավարժություն, մարզի 8 դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են օբյեկտային վարժանքներ, 20 կազմակերպություններում՝ հատուկ տակտիկական ուսումնավարժություն, իսկ 60 ուսումնական հաստատություններում՝ դասախոսություններ:

Մարզային ՔՊ ծառայությունների շտաբների պետերի հետ անցկացվել է 3 հրամանատարական պատրաստության պարապմունք:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են մարզպետարանի Ենթակայության 90 հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնցից 59-ը՝ միջնակարգ, 30-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /օժանդակ/ և ԿԳ նախարարության Ենթակայության 11 ավագ դպրոց, մեկ կրթահամալիր /Աբովյանի /, 5 արհեստագործական ուսումնարան, ինչպես նաև 6 քոլեջ և մեկ ոչ պետական բուհ /Հրազդանի հումանիտար ինստիտուտ/: 102 հանրակրթական ուսումնական հաստատություններից 38-ը քաղաքային են, 64-ը՝ գյուղական:

Մարզային Ենթակայության հանրակրթական դպրոցներում սովորում են 32247 աշակերտ, իսկ առաջին դասարան են հաճախում 3788 աշակերտ:

2016-2017 ուսումնական տարում 9-րդ դասարանն ավարտել են 2750 աշակերտներ, իսկ 12-րդ դասարանը՝ 1700:

Դասարանի միջին խտությունը մարզային Ենթակայության հանրակրթական դպրոցներում կազմում է շուրջ 21,5 աշակերտ:

Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը մարզի դպրոցներում 11,3 Է/ հանրապետական միջինը կազմում է 9,4 /:

Մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 3070 ուսուցիչներ: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 15,6 դասաժամ: Նոր ուսումնական տարում ծանրաբեռնվածությունը մի փոքր կրաքարանա և կկազմի շուրջ 16 ժամ/օտար լեզուների կիսվող դասաժամերի հաշվին /: Միջին դրույքաչափը /22 դասաժամ / մարզում կազմել է 123 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում հետևողական վերահսկողության է իրականացվել կրթական հաստատություններում իրականացվող գնումների օրինականության, տնօրենների կողմից սովորողների ընդունելության, ուսուցիչ թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգերի և այլ նորմատիվ փաստաթղթերի դրույթների պահանջների կատարման ուղղությամբ: Այդ նպատակով իրականացվել են շրջայցեր, ինպես նաև համակողմանի ուսումնասիրություններ:

Եթե չորս տարվա ընթացքում տարակարգ ունեին ընդամենը 33 ուսուցիչներ, ապա հաշվետու տարում նման որակավորում ստացել են 44-ը:

Այս տարի առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում մեր դպրոցականների նվաճած 20 դիպլոմներից երեքը 1-ին կարգի են, վեցը՝ երկրորդ, 11-ը՝ 3-րդ կարգի: Գովասանագրերի թիվը նոյնպես 11 է:

Կրթության որակի և մակարդակի կարևոր չափանիշ է նաև պետական ավարտական և ընդունելության միասնական քննությունների ժամանակ շրջանավարտների, հատկապես՝ դիմորդների ստացած գնահատականները: Այս տարվա 1700 շրջանավարտներից միասնական քննություն են հանձնել 778 -ը, որոնց շուրջ 98 տոկոսը ընդունվել են բուհեր:

Մարզային Ենթակայության ուսումնական հաստատություններից հիմնանորոգված են 38-ը, մասնակի՝ 27-ը, իսկ մնացած 26-ը վերանորոգման կարիք ունեն:

Մարզային Ենթակայության ուսումնական հաստատություններում լոկալ ջեռուցմամբ ապահովված են 90 դպրոցներից 74-ը, իսկ 16-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով և վառարաններով:

Մարզում գործում են 53 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 25-ը հիմնովին վերանորոգված են:



Մարզի 11 հանրակրթական հաստատություններում 161 աշակերտներ ստացել են ներառական կրթություն: 2017 թվականին վկայագրված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 135 երեխաներ:

<< կառավարության և ՄԱԿ-ի <<Պարենի համաշխարհային ծրագրի>> կողմից իրականացվող <<Դպրոցական սնունդ>> ներդրումային ծրագրով մարզի 47 դպրոցների 8882 աշակերտ ապահովվել է ամենօրյա տաք սնունդով:

<< կառավարության սույն թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ օպտիմալացվել է մարզի Զովաշենի հիմնական դպրոցը, որը միաձուվել է Հատիսի դպրոցին, իսկ Փյունիկի դպրոց՝ Արտավազի դպրոցին կմիաձուվի ս/թ հունիսի 1-ին:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Մշակույթ

Մարզում գործում են 23 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 5 թանգարաններ, 1 թատրոն, 2 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 67 գրադարաններ, 52 մշակույթի տներ և ակումբներ, 1 պատկերասրահ, 2 երաժշտական և 1 գեղարվեստի ստուդիաներ:

Գեղարվեստական կրթության հաստատություններում սովորում են **4178** աշակերտներ, աշխատում են **471** մանկավարժներ:

Տարվա ընթացքում, մշակութային միջոցառումների մարզային ծրագրի համաձայն, կազմակերպվել և իրականացվել են << պետական ու ազգային-եկեղեցական տոններին և հիշատակի օրերին, ինչպես նաև ժողովրդական ավանդույթների և ծեսների պահպանմանը, դեկորատիվ կիրառական և ժամանակակից արվեստի տարբեր ճյուղերի զարգացմանը նվիրված զանազան միջոցառումներ՝ ասմունքի, էպոսասացության, երգի ու պարի մրցույթ-փառատոններ, ցուցահանդեսներ, հայրենաճանաչողական արշավներ և ուխտագնացություններ:

Կազմակերպվել են նաև հայ մշակույթի և արվեստի, հասարակական-քաղաքական ականավոր գործիչների հորելյաններին նվիրված <<Մեր մեծերը>> խորագրով մի շարք միջոցառումներ՝ դասախոսություններ, զրոյցներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, քննարկումներ, բաց դասեր:

Սփյուռքի երիտասարդների Հայաստան այցելությունների <<Արի տուն>> ծրագրի շրջանակներում մարզի մի շարք համայնքներում հյուրընկալվել են սփյուռքահայ երիտասարդներ, որոնց համար կազմակերպվել են մշակութային, ժամանցային միջոցառումներ և հայրենագիտական-ճանաչողական էքսկուրսիաներ:

Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 10-րդ մրցույթ-փառատոնի եզրափակիչ փուլում մարզի դպրոցականները արժանացել են մեկ՝ 1-ին և երկու՝ խորախոսական մրցանակների: Մարզի ներկայացուցիչները տարբեր կարգի մրցանակներ են շահել նաև հերիաթասացության և էպոսասացության հանրապետական մրցույթ-փառատոններում: <<Հայ ասպետ - 2017>> եթերաշրջանի հեռուստախաղի եզրափակիչ փուլում, ավագ տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Զարենցավանի ավագ դպրոցի թիմը:

Շարունակվել է մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում <<Ազգային, լարային և փողային նվագարանների ուսուցման գծով ուսման վարձավճարի փոխհատուցման>> պետական ծրագրի իրականացումը: Մարզի 16 դպրոցներ **253** աշակերտի ուսուցման համար 2017 թվականին ստացել են **67484.0մլn.** դրամ: Վերահսկվել է ընդունելության և ավարտական



քննությունների ընթացքը, մշակվել և << մշակույթի նախարարություն է ներկայացվել նոր ուսումնական տարվա անվճար տեղերի պահանջը:

Սպորտ

Մարզում գործում են 15 մանկապատանեկան մարզադպրոցներ, որոնցից 2-ը մարզային ենթակայության, 2-ը՝ <<Սևան գյուղական մարզական ընկերության>>, 6-ը՝ համայնքային և 4-ը՝ հանրապետական ենթակայության: Մարզադպրոցներում գործում են հետևյալ խմբերը. հունահոռոմեական և ազատ ոճի ըմբշամարտ, բռնցքամարտ, ծյուդո, սամբո, ծանրամարտ, դահուկային սպորտ, շախմատ, ֆուտբոլ, հանդբոլ, արևելյան մարտարվեստ մարզաձևերից: Մարզադպրոցներում և մարզական ակումբներում աշխատում են **134 մարզիչներ, պարապող սաների թիվը 5520 է:**

Կազմակերպվել են բազմաթիվ մրցաշարեր՝ << դպրոցականների 26-րդ մարզական խաղեր, << Ազգային ժողովի գավաթի խաղարկության>> մրցումներ, << դպրոցականների շախմատի օլիմպիադայի տարածաշրջանային և մարզային մրցումներ: Մարզպետի հովանու ներքո կազմակերպվել և անցկացվել են 2017թ. շախմատի պատանեկան մարզային առաջնությունը:

Մարզի ութ համայնքներում մարզպետարանի համակարգմամբ անցկացվել են մարզական փառատոններ/ Հանրապետական եզրափակիչ փուլում Բյուրեղավան քաղաքը գրավել է երկրորդ տեղը/, Սահմանված կարգով և նախատեսված ժամկետներում մարզում անցկացվել են նաև նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր, սպորտանդիաններ, << նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի, <<Լավագույն մարզական բակ>/> Աբովյան քաղաքի ստուգատեսի համայնքային և մարզային փուլերը:

<<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի մարզային փուլին մասնակցել են 72, համայնքային փուլերին՝ 196 ընտանիքներ: Մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցել են հաշմանդամություն ունեցող 3 մարզական ընտանիքներ:

Մարզը ընդհանուր թիմային հաշվարկով գրավել է երկրորդ տեղը՝ արժանանալով << Նախագահի գավաթին:

<< Նախագահի մրցանակի համար <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթի հանրապետական փուլին մասնակցել են 8 մարզիկներ:

Շարունակվում է Զարենցավանի համայնքային ենթակայության մանկապատանեկան մարզադպրոցի նոր շենքի կառուցումը:

Միջազգային պատասխանատու մարզական ստուգատեսերում մարզի ներկայացուցիչները արժանացել են տարբեր կարգի մեդալների և գավաթների.

Էմիլ Ամիրշատյանը/Հրազդան/ դարձել է բազկամարտի Եվրոպայի առաջնության չեմպիոն, Վաչիկ Վարդանյանը/Եղվարդ/ մարտական սամբոյի աշխարհի առաջնությունում դարձել է փոխչեմպիոն: Աննա Մկրտչյանը դարձել է սամբոյի Աշխարհի ու Եվրոպայի երիտասարդական առաջնությունների փոխչեմպիոն: Քասախի ծանրամարտի մարզադպրոցի չորս սաներ Աշխարհի մինչև 23 տարեկանների և Եվրոպայի պատանեկան ու երիտասարդական առաջնություններում գրավել են մրցանակային տեղեր:

Հաշվետու տարում կարևոր ուշադրություն է դարձվել երիտասարդության խնդիրներին առնչվող մարզային նշանակության ծրագրերի մշակմանը և իրականացմանը: Կազմակերպվել է << Բազե Կոտայք >> մարզային երիտասարդական հավաք, որին



մասնակցել են մարզի 27 համայնքները ներկայացնող 18-30 տարեկան ավելի քան 190 երիտասարդներ:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից անցկացվող <<Հավագոյն երիտասարդական մայրաքաղաք>> -2017 մրցույթի հանրապետական փուլի հաղթող Զարենցավան համայնքում կազմակերպվել են բազմաթիվ մարզային և հանրապետական նշանակության միջոցառումներ:

Տարվա ընթացքում երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են քննարկումներ Հայաստանի Հանրապետության <<Երիտասարդական պետական քաղաքականության 2018-2025թթ. ռազմավարության>> վերաբերյալ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

	2016թ.	2017թ.	Դինամիկան
• Նպաստառու ընտանիքներ -	9459	9055	-404
• Կենսաթոշակառուներ -	40830	40855	25
• Գործազրուկներ -	8491	8951	460

Նպաստառու ընտանիքների թվի հաշվարկով աղքատության մակարդակը մարզում կազմում է շուրջ 21%, սակայն տարբեր հաշվարկներով աղքատության մակարդակը հասնում է մինչև 35 %, որից ծայրահետ աղքատ են համարվում 2.5 %:

ԽՍՀՄ բնակերում ունեցած ավանդների փոխհատուցում է տրամադրվում մինչև 1931թ. դեկտեմբերի 31-ը ծնված անձանց և հաշմանդամ դարձած ազատամարտիկներին ու զինծառայողներին: Տարեսկզբից մինչև այժմ 267 ընտանիքի տրամադրվել է ավանդների փոխհատուցման գումար շուրջ 47.1 մլն.դրամ:

Տնտեսապես ակտիվ բնակչությունը մարզում հաշվարկվում է շուրջ 125 հազ.մարդ, չգրանցված գործազրկությունը կազմում է 23 % /28750մարդ/:

2003-2017թ. բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել մարզի գոհիված և հաշմանդամ դարձած 234 անապահով զինծառայողների ընտանիքներ: Դեռևս բնակարանի բարելավման կարիք ունեն 217 զոհված/78/ ու վիրավոր/139/ ազատամարտիկների ընտանիքներ: <<Նախագահի հանձնարարականի համաձայն մարզի գոհիված անօթևան և 1-ին խմբի հաշմանդամ զինծառայողների ընտանիքներ /15 ընտանիք/ առաջնահերթ կարգով պետք է ապահովվեն բնակարաններով: Դեկտեմբերի 20-ի դրությամբ 7 ընտանիքի տրամադրվել է ԲԳՎ/բնակարանի գնման վկայագիր/:

Զարենցավան և Եղվարդ քաղաքներում գործում են ինտեգրված սոցիալական ծառայությունները, որոնք ամբողջությամբ վերանորոգված են և ապահովված աշխատանքային ու կոմունալ բոլոր հարմարություններով:

2018 թվականի երկրորդ կիսամյակից Հրազդան քաղաքում նոյնպես կգործի ինտեգրված սոցիալական ծառայությունների համալիր մասնաշենքը: Աբովյան քաղաքում ինտեգրված սոցիալական ծառայությունների տեղակայումը գտնվում է նախապատրաստական փուլում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզում գործում են՝

40 բուժհաստություններ՝ որոնցից 35-ը մարզպետարանի ենթակայության են.

4 բժշկական կենտրոններ (Հրազդան, Արտավազ, Չարենցավան, Նախիջևան),

1 ծննդատուն (Արտավազ),

1 մարզային արյան բանկ (Հրազդան)

1 պոլիկլինիկա /Նոր Հաճն/

2 առողջության կենտրոն /Գառնի, Արգել/

26 առողջության առաջնային պահպանման կենտրոններ և բժշկական ամբողջապետորիաներ 5-ը համայնքային ենթակայության՝ (<<Մեղրաձորի ԲԱ>> <ՈԱԿ>, <<Լեռնանիստի ԲԱ>> <ՈԱԿ>, <<Աղյնջի ԲԱ>> <ՈԱԿ>, <<Բուժականի ԲԱ>> <ՈԱԿ>, <<Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա>> ՊՓԲԸ):

Մարզի մահճակալային ֆոնդը **253** է:

2017թ. գլոբալ բյուջեն կազմում է մոտ 3 մլրդ դրամ, որից ամբողջապետոր ծառայության գծով շուրջ 2 մլրդ դրամ, հիվանդանոցային ծառայության գծով շուրջ 1 մլրդ դրամ:

2017 թվականի 11 ամիսների ընթացքում վճարովի ծառայություններից և այլ մուտքերից գոյացել է 316 մլն <<դրամ՝ 2016 թվականի նույն ժամանակահատվածի 298 մլն-ի դիմաց:

Մարզի բժշկական կազմակերպություններում աշխատում են **1656 անձ**.

- **բժիշկներ 403**
- **բուժքույրեր 791**
- **կրտսեր բուժաշխատող 167**
- **վարչատնտեսական 295**

ՀՀ Առողջապահության նախարարության կողմից Կոտայքի մարզի դիսպանսեր հաշվառված հիվանդներին տրամադրվել է **2017թ. 11 ամիսների ընթացքում 114 մլն իսկ 2016թ. 117 մլն դրամի դեղորայք** (հումանիտար և կենտրոնացված):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բժշկական կազմակերպությունները **դեբետորական և կրեդիտորական պարտքեր չունեն**:

2017 թվականի փետրվար-մարտ ամիսներին «Առողջապահության կազմակերպիչների ասոցիացիա» առողջապահական հասարակական կազմակերպության աջակցությամբ <<Կոտայքի մարզի <<Հրազդանի բժշկական կենտրոն>>, <<Չարենցավանի բժշկական կենտրոն>>, <<Ո. Հարությունյանի անվան Արովյանի բժշկական կենտրոն>>, <<Արտավազի ծննդատուն>>, <<Նախիջևանի բժշկական կենտրոն>>, <<Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա>>, <<Նոր-Հաճնի պոլիկլինիկա>> բժշկական հաստատություններում անց է կացվել **«Բաց դռների օր»** առողջապահական միջոցառումը, որի շրջանակներում Երևան քաղաքից ժամանած առաջատար բժիշկ-մասնագետներ՝ նյարդաբան, սրտաբան, ներզատաբան, ակնաբույժ, ուռուցքաբան, մանկաբարձ-գինեկոլոգ, մաշկաբան, անոթաբան, արյունաբան, ուռոլոգ, վնասվածքաբան, մանկաբույժ տրամադրել են մասնագիտական խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում կատարվել են ուղեգորումներ մասնագիտացված բժշկական կազմակերպություններ:

Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2016 թվականին <<Քաղսիի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի շենքի կառուցման համար հատկացվել է 56 մլն, ևս 6մլն.



Դրամ տրամադրվել է Քաղսիի համայքապետարանի կողմից իսկ գույքը տրամադրել է Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը: 2017 թվականին շենքը հանձնվել է շահագործման:

2017թ. մարտի 20-ից հունիսի 15-ը Կոտայքի մարզում իրականացվել է ակնաբուժական բարեգործական աշխատանքներ, որի արդյունքում հետազոտվել է 1514 բնակիչ, տրամադրվել է 40 ակնոց սոցիալապետ խոցելի խմբերին: Կատարվել է 451 վիրահատություն:

2017 թվականից «ՀԿ Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունները մատուցված ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրում են էլ-առողջապահական միասնական համակարգ, որի համար վերապատրաստվել են համապատասխան մասնագետներ:

2017 թվականի հոկտեմբերից ուժի մեջ մտնող փոփոխության արդյունքում սոցփաթեթի շահառուների սպասարկման ծախսերը կփոխհատուցեն ապահովագրական ընկերությունները:

«ՀԿ առողջապահության նախարարի 2017 թվականի հունիսի 12-ի թիվ 1903-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ մարզային առողջապահական համակարգի օպտիմալացման նպատակով, որը պարբերաբար իրականացնում է քննարկումներ: Քննարկվում է մարզի բժշկական կենտրոններում օպտիմալացնել որոշ հաստիքներ, միաժամանակ միավորել գյուղական ԱԱՊԿ հաստատությունները՝ հիմք ընդունելով նրանց աշխարհագրական դիրքը: Աշխատանքներ են տարվում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ:

ՀԿ Կոտայքի մարզի մշտական գործող հանձնաժողովի կողմից քաղաքացիներին տրամադրվել են 16 միջնորդագրեր՝ պետպատվերի շրջանակներում Երևանի բուժիաստատություններում բուժօգնություն ստանալու համար, մարզի բուժիմնարկներում բուժօգնություն ստանալու համար տրվել են 55 ուղեգրեր, սանատոր-կուրորտային բուժման կարիք ունեցող 113 հաշմանդամ ուղեգրվել են Աղվերանի „Գանձաղբյուր,, „Վանաձորի ԱՍԱՐ” և Զերմուկի «Արարատ» մանկական առողջարաններ, 2017 թվականին Կոտայքի մարզում փաստացի բնակվող օտարերկրյա քաղաքացիներին ծննդատներում ծննդալուծվելու համար տրամադրվել է 5 ծննդօգնության պետական հավաստագիր:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՊԱՇՏԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքի, կանաց և երեխաների իրավունքների պաշտպանության /ԸԿԵԻՊ/ բաժնի կողմից առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ և ԱԾԽՄ թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 114 անձինք, ԱԾԽՄ երեխաներ են 77-ը (նրանցից 11-ը հաշվառվել են 2017թ. ընթացքում), իսկ ԱԾԽՄ թվին պատկանող՝ 37-ը:

Մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների շտեմարանում ուստիկանության անչափահասների գործերով բաժանմունքներից ստացված տվյալների հիման վրա 2017թ. ընթացքում հաշվառվել են 24 իրավախախտ անչափահասներ, հաշվառումից հանվել՝ 29-ը, այժմ հաշվառման մեջ են գտնվում 24 իրավախախտ անչափահասներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի աշխատակազմի կողմից տրված եզրակացությունների հիման վրա մանկատուն է տեղավորվել 3 երեխա, մանկատնից կենսաբանական ընտանիք է վերադարձվել 1 երեխա:



Արդյունավետ աշխատանք է տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, կրթության իրավունքի վերականգնման, ներառական կրթության համակարգ ընդգրկելու և նրանց կարիքի գնահատման առումով, արդյունքում այս տարվա ընթացքում վկայագրվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **48** երեխաների տրվել են վկայագրեր:

2017թ. <<Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>> ՊՈԱԿ-ներ են տեղավրվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով ընտանիքների **13** երեխաներ, նրանց տրվել են համապատասխան եզրակացություններ, կարիքների գնահատման հիման վրա կազմվել են սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրեր, իսկ **25** երեխաներ համապատասխան եզրակացությունների հիման վրա դուրս են գրվել խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններից:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված /ԿԴՀ/ երեխաների հաշվառման <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ 2017թ. ընթացքում մուտքագրվել է **93** երեխաների և երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների տվյալներ՝ այդ թվում **82** ԿԴՀ երեխաներ և երեխա որդեգրել ցանկացող **11** քաղաքացիներ:

Երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների կենսապայմանների ուսումնասիրման նպատակով կատարվել են տունայցեր, կազմվել են համապատասխան ակտեր, որոնց հիման վրա տրվել են դրական եզրակացություններ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2017թ. հողային հաշվեկշռի համաձայն մարզում առկա են **154549,9** հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր, որոնք կազմում են հանրապետական նմանատիպ հողերի **7,8** տոկոսը, այդ թվում վարելահողեր՝ **37680,0** հա, բազմամյա տնկարկներ՝ **2867,6** հա, խոտհարքներ՝ **11256,9** հա, արոտներ՝ **78878,4** հա: Նշված տարածքներից պետական և համայնքային սեփականություն են համարվում **7548,6** հա վարելահող, **2901,3** հա խոտհարք, **81,1** հա բազմամյա տնկարկ և **75751,2** հա արոտ:

Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով մեր կողմից ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի **23** համայնքներում: Միաժամանակ՝ ս/թ մայիս-հունիս ամիսներին մարզպետարանի հողաշինության բաժնում տեսչական ստուգումներ են կատարվել **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեռդեզիայի և հողային պետական տեսչության կողմից**, որի արդյունքում բաժնի աշխատանքներում թերություններ և խախտումներ չեն հայտնաբերվել:

Համադրման նպատակով տեսչությունը ուսումնասիրություններ է իրականացրել մարզի Նոր Գեղի, Նոր Արտամետ, Գետամեջ, Եղվարդ, Մայակովսկի, Աղինջ, Բալահովիտ, Զառ, Հացավան, Մեղրաձոր, Լեռնանիստ համայնքներում:

ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան համայնքների ղեկավարների մասնակցությամբ մարզային հանձնաժողովում քննարկվել և **ՀՀ վարչապետի 13.05.2001թ. թիվ 599 որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը են ներկայացվել թվով 38 միավոր հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործերը, որոնցից 37 միավորի վերաբերյալ ստացվել են դրական եզրակացություններ:**

ՀՀ կառավարության 23.07.2015թ. թիվ 828-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքներից ստացվել են թվով 14 միավոր հողամասերի գործառնական նշանակության փոփոխության առաջարկություններ, որոնցից 12-ը ստացել են մարզպետի համաձայնությունը և դրանց սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք, իսկ 2 առաջարկներ վերադարձվել են լրամշակման՝ դրանցում առկա թերությունները վերացնելու նպատակով:

2017թ. ընթացքում ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն մարզպային համապատասխան հանձնաժողովում քննարկվել են մարզի Հրազդան համայնքում գտնվող 3 միավոր գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերը ավելի ցածր արժեքի փոխանցելու վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

2017թ. ընթացքում բաժինը ստացել և սահմանված կարգով ընթացք է տրվել թվով 1551 գրությունների և նամակների, որից 72-ը քաղաքացիներից:

Մարզպային հողային պետական տեսչության առաջնահերթ նպատակն ենք համարում հողային օրենսդրության պահանջների խախտումների կանխարգելումը, համայնքների ղեկավարներին մեթոդական աջակցություն ցուցաբերելը, ինչպես նաև հայտնաբերված խախտումների նկատմամբ խիստ վերաբերմունքի դրսևորումը, համաձայն որի ՀՀ Կոտայքի մարզի թվով 8 համայնքների ղեկավարների նկատմամբ 2017թ. ընթացքում կիրառվել են վարչական տույժեր 1.150.000,0 դրամ ընդհանուր գումարի չափով, որոնք ամբողջությամբ փոխանցվել են պետական գանձապետարանի համապատասխան հաշվին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են 31587 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ:

Հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները

2016-2017թթ.

Մշակաբույսի անվանումը	տարածությունը հա			
	2016թ	2017թ	2017թ. 2016թ-ի նկատմամբ +/-	2017թ. 2016թ-ի նկատմամբ %
ընդամենը մարզում այդ թվում՝	19279,2	18968	-311,2	98,4
Հացահատիկ և ընդեղեն	13670,7	13329	-341,7	97,5
կարտոֆիլ	923	886	-37	96,0
բանջար	1264	1158	-106	91,6
տեխն. մշակաբույսեր	45	75	30	166,7



Կերային մշակաբույսեր	3361,5	3520	158,5	104,7
----------------------	--------	------	-------	-------

2017թ. գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 283 շահառուների կողմից վճարվել և ծեռք է բերվել 74.8 տ. գարնանացան գարու, 0.218 տ. առվույտի, 3.5տ գարնանացան ցորենի, 40.26տ կորնգանի. 0.584տ սիսեռի, 0.05տ եգիպտացորենի սերմացուներ, որոնցով կատարվել է համապատասխանաբար՝ 374 հա գարու, 18.72 հա առվույտի, 14 հա գարնանացան ցորենի, 36 հա կորնգանի, 4.5 հա սիսեռի, 2 հա եգիպտացորենի ցանք (պահանջարկը բավարարվել է):

Պետական աջակցության ծրագրերով 2017թ.-ին մարզին հատկացվել և ներկրվել է.

- ազոտական պարարտանյութ – 1900 տոննա (ներկրվել է 1856.75 տոննա, հավաքագրվել է 222.8 մլն. դրամ, պարտք չկա),
- կալիումական պարարտանյութ – 81.5 տոննա (ներկրվել է 30.8 տոննա – հավաքագրվել է 4326000 դրամ, պարտք չկա),
- ֆոսֆորական պարարտանյութ – 66 տոննա (ներկրվել է 30.7 տոննա – հավաքագրվել է 4298000 դրամ, պարտք չկա):

Գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է, ծրագրից օգտվել են մարզի 57 համայնքների շուրջ 6001 շահառուներ:

Եթե գյուղատնտեսական տարին բնութագրելու լինենք, ապա այն կարելի է համարել անբարենպաստ, մասնավորապես՝ հացահատիկի արտադրության բնագավառում (անցած երկարատև և ցրտաշունչ ձմեռը որոշակի վնաս հասցրեց աշնանացան հացահատիկային մշակաբույսերին, առանձին գյուղացիական տնտեսություններ գարնանը ոչնչացված աշնանացանի ցանքների վրա կատարեցին ենթացանք): Ընթացիկ տարում օպերատիկ տվյալներով արտադրվել է 27036 տոննա հացահատիկ /միջին բերքը կազմել է 20.7 գ/հա/, արտադրվել է նաև 27800 տոննա կարտոֆիլ, 25088 տոննա բանջարեղեն, 73000 տոննա պտուղ, կուտակվել է 35000 տոննա խոտ, 7000 տոննա ծղոտ:

<< գյուղատնտեսության նախարարության համապատասխան ծառայությունների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում գարնանը մարզի 45 համայնքներին հատկացվել է 1110.88կգ <<Ռոդիֆակում-Ս>> մկնասպան թունանյութ. 13886 հա-ի վրա կատարվել են պայքարի աշխատանքներ մկնանման կրծողների դեմ:

Մարզում գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Այստեղ կենտրոնացված է հանրապետության խոշոր եղերավոր անասունների գլխաքանակի շուրջ 7.8%-ը (56.4 հազար գլուխ խ.ե.կ., որից 24.3 հազարը՝ կովեր), ոչխարների և այծերի՝ 5.8%-ը (43.1հազար գլուխ) և խոզերի՝ 10.1%-ը (20.3 հազար գլուխ):

2017 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արտադրվել է 7.1 հազար տոննա միս (կենդանի գանգվածով), ինչը 16.7 տոկոսվ ավել է նախորդ տարվա առաջին կիսամյակում արտադրվածի համեմատ: Կաթի արտադրության ծավալն ավելացել է 1.0 տոկոսվ կամ արտադրվել է 59.7 հազ. տոննա կաթ, ծվի արտադրության ծավալը հասել է 104.4 մլն. հատի, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից համեմատ ավել է 3.2 տոկոսով:

Մարզում լուրջ առաջընթաց կա գործող անասնապահական մթերքների արտադրության վերամշակմամբ զբաղվող ծեռնարկությունների գործունեության բնագավառում, որոնց տեխնիկական



հագեցվածությունը տարեցտարի ավելանում և համապատասխանեցվում է միջազգային ստանդարտներին: Արտադրանքի աճի հետ մեկտեղ զգալի աշխատանքներ են տարվել որակյալ և մրցունակ ապրանքների արտադրության ուղղությամբ՝ մարզի մի շարք ընկերությունների որոշ ապրանքատեսակներ արտահանում և հաջողությամբ իրացնում են արտերկրում:

Մարզում դրական տեղաշարժերից առանձապես կարևորվում է փակ գրունտի բանջարեղենի արտադրության ավելացումը: Ընդհանուր առմամբ շերմոցների տարածքը 2017 թվականին կազմել է 71.4 հա, որից բանջարեղենի արտադրություն՝ 24.15 հա /Զորացյուր, Նոր Գեղի, Արամու/, ծաղիկի արտադրություն՝ 39.22 հա /Գողթ, Մայակովսկի/, ելակի արտադրություն՝ 8 հա /Նոր Գեղի, Ակունք/:

Պարբերական աճի միտում է նկատվում նաև տեխնիկական մշակաբույսերի (կտավիատ, ծխախոտ) ցանքերի նկատմամբ, որոնք 1 հա-ի հաշվով բարձր եկամուտ են ապահովում:

Չնայած մարզում հաշվառված է 826 տրակտոր, 83 հացահատիկահավաք կոմբայն, 351 տրակտորային կցասայլ, 120 տրակտորային խոտինձիչ, 32 կերահավաք կոմբայն, 133 հավաքիչ-մամլիչ և այլ գյուղատնտեսական տեխնիկա, սակայն դրանց սարքինության մակարդակը միջինը կազմում է շուրջ 85.0%՝ հանրապետական միջինի՝ 82.0 %-ի համեմատ: 2017 թվականի սեպտեմբերի 8-ի դրությամբ ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում Զառ, Պոռշյան, Զորավան, Արզական, Սոլակ, Հրազդան համայնքների շահառուների կողմից ծեռք է բերվել 8 միավոր գյուղատնտեսական տեխնիկա (<<Բելառուս>> անիվավոր տրակտոր) և 11 միավոր գյուղգործիք (խոտինձիչ, սրսկիչ, հողաֆրեզ, քարհավաք):

2012-2017թթ. մարզ ներկրված պարարտանյութերի, սերմերի և դիզվառելիքի գումարները ամբողջությամբ հավաքագրվել են, պարտքեր չկան:

2017թ. << կառավարության կողմից հաստատված գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույցների սուբսիդավորման ծրագրից օգտվելու համար Կոտայքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն է ներկայացվել 605 հայտ, որից 17 խումբ անցել են դասընթացներ. հավաստագիր են ստացել 329 շահառուներ:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական առումով մարզում առաջնային խնդիր են մնում թափոնների տեղադրման, աղբահանության և աղբավայրերի չկանոնակարգված օգտագործման, ինչպես նաև միջային հանրապետական և հանրապետական ճանապարհամերձ տարածքներում սանիտարական մաքրման հարցերը: Մարզում կան 10 հիմնական աղբավայրեր, որոնցից 4 խոշորները շահագործվում են Հրազդան, Արովյան, Եղվարդ, Զարենցավան համայնքների կողմից:

Ընթացքի մեջ է <<Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում>> ծրագրով աղբավայրի նախագծման աշխատանքները: Նախատեսվում է Հայաստանում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան առաջին տարածաշրջանային աղբավայրը, որը տեղակայված կլինի մարզի Հրազդան քաղաքի վարչական տարածքում և էապես կնպաստի հատկապես քաղաքային համայնքների աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

2017 թվականի գարնանը կատարվել է մարզի 184 աղբանոցների և աղբավայրերի գույքագրման և անձնագրավորման գործընթաց, որից հետո իրականացվել է նրանց փակմանն ուղղված աշխատանքներ: Արդյունքում՝ նոյեմբեր ամսվա դրությամբ փակվել են 166-ը, իսկ 8-ի /բացի հիմնական 10 աղբավայրերից/ փակման աշխատանքները կիրականացվեն << կառավարության կողմից տրամադրվող համապատասխան ֆինանսական միջոցների հաշվին:



Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավագանների աղտոտվածության հիմնական աղբյուրը կենցաղային կեղտաջրերն են, անհրաժեշտ է ապահովել կեղտաջրերի մաքրման կենսաբանական ինքնավար / լոկալ/ համակարգերի կիրառումը: Մաքրման կայանների բացակայության պատճառով կեղտաջրերը վերջնականապես լցվում են գետերը և Աղբյուրակի ջրամբար: Հատկապես մտահոգիչ է Քաղսիի նախկին մաքրման կայանի տեղում նոր մաքրման կայանի կառուցումը, որը հատկապես կարևորվում է Հրազդանի տարածաշրջանի համար:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ նեֆելինային սիենիտների, ոսկու, պղինձմոլիբդենի, բազալտի, լիթոհիդային պեմզայի, մարմարի, գրանիտի, հրաբխային խարամի, հանքավայրերով: 2017 թվականի դրությամբ մարզում տրվել են 60 հանքավայրերի շահագործման թույլտվություններ, որոնք պատկանում են 47 տնտեսվարող սուբյեկտների և գտնվում են 20 համայնքների վարչական տարածքներում: Դրանցից տարվա ընթացքում շահագործվել են 33-ը, 11-ը չեն շահագործվում պահանջարկ և հնարավորություններ չունենալու պատճառով, իսկ մնացածը գտնվում են փաստաթղթային ծևակերպումների փուլում: Առկա են հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրեր՝ Բջնի, Արզնի և Հանքավան, որոնցից առաջին երկուսը շահագործվում են թերեռնվածությամբ: Քիչ չեն նաև քաղցրահամ ջրերի /Կաթնաղբյուր, Գառնի, Արզական, Մաքրավան, Գյումուշ, Ալափարս, Նուռնուա/ աղբյուրները, որոնցից օգտվում են ինչպես մարզի բնակավայրերը, այնպես էլ Երևան քաղաքը: Ըստ գույքագրման տվյալների մարզում առկա են 440 բնադրյուրներ և 200-ից ավելի խորքային հորեր: Մարզը մեծ ներուժ ունի քաղցրահամ ջրեր շշալցելու նպատակներով օգտագործելու և համաշխարհային շուկա դուրս գալու համար:

Կոտայքի մարզում անտառները զբաղեցնում են տարածքի շուրջ 11 տոկոսը / 22761 հա/, որը համեմատական է հանրապետության միջինին: Դրանք ունեն հողապահտապան, ջրապահտապան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում հարուստ կենսաբազմազանությամբ, որը մեծ հնարավորություններ է տալիս արտադրություններ հիմնելու համար: Մարզի անտառները լուրջ բարեփոխումների կարիք ունեն, պետական բյուջեից տրվող սահմանափակ միջոցները հնարավորություն չեն տալիս բավարար մակարդակով կատարելու անտառվերականգնման աշխատանքներ:

2017 թվականի աշնանը պետ բյուջեի միջոցներով Հրազդանի անտառային տարածքներում 100 հա-ի վրա իրականացվել է բնաշվային վերաճի օժանդակման աշխատանքներ, որը էականորեն կնպաստի նախկինում հատված տարածքներում անտառի արագ վերականգնմանը: Վերջին տարիներին իրականացված հետևողական աշխատանքների շնորհիվ նվազել են ապօրինի անտառահատումները, արձանագրվել են ընդամենը 10 անտառխախտման դեպքեր, հատվել են թվով 167 ծառեր:

<<Ընկերությունների կողմից վճարվող բնապահանական վճարների նպատակային օգտագործման մասին>> <<օրենքի շրջանակներում 2018 թվականին մարզի Զարենցավան /լուսավորություն/ և Շաղկաձոր /ծառատուն/ համայնքերում կիրականացվեն բնապահանական ծրագրեր:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

<<Կոտայքի մարզին պետական բյուջեից շինարարական և վերանորոգման աշխատանքների համար հատկացվել է 550,0 մլն դրամ: Մրցույթների արդյունքում կնքվել են 373,9 մլն.դրամի պայմանագրեր, տնտեսվել է 176,1 մլն.դրամ:

2017 թվականին պետական բյուջեից հատկացված գումարներով <<Կոտայքի մարզպետարանի պատվիրատվությամբ կատարվել են չորս մշակութային, երեք կրթական և նախակրթական, մեկ առողջապահական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները:

Կատարված աշխատանքների համառոտագիրը

C/C	Բովանդակություն	Քանակ
1	2	3
1	Մարզպետարան իրազեկված շինարարության թույլտվություն.	455
	այդ թվում -անհատական բնակելի տներ -հասարակական սպասարկման օբյեկտներ	219
	-այլ օբյետներ /տնտ.շինություններ, ավտոտնակ,պահեստ,պարիսապ,հանգստի գոտի/	103
		133

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Մարզի տարածքում կատարված աշխատանքների ընթացքը նախորդ տարվա համեմատությամբ երևում է հետևյալ աղյուսակում

C/C	Անվանում	2016թվ.	2017 թվ.
1	Մարզպետարան իրազեկված շինարարության թույլտվություններ	347	455
2	Շինարարության ավարտի փաստագրման ավարտական ակտ	118	148
3	Շինարարության քանդման թույլտվություններ	13	23

2017 թվականի ընթացքում վարչությանը հասցեագրվել է 1238 գրություններ և 169 դիմում բողոքներ, որոնց տրվել է համապատասխան ընթացք:

	2016թ.	2017թ.
Գրություններ	1520	1238
Դիմում-բողոքներ	162	169

Քաղաքաշինության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից կարևորվում են հետևյալները.



- մարզի 24 համայնքներ ունեն գլխավոր հատակագծեր, 10 համայնքների գլխավոր հատակագծերը մշակման փուլում են: Առաջնահերթ լուծում պահանջվող խնդիրներից է մարզի 33 համայնքների գլխավոր հատակագծերի մշակումը:

Կոտայքի մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու մասին N 266-Ա որոշմամբ աշխատանքային խմբի հետ, համաձայն << քաղաքաշինության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 371-Ն հրամանի հարցաշարի, քաղաքաշինության, տրանսպորտի և կապի բնագավառներում վարչական հսկողություն է իրականացվել մարզի 2 քաղաքային և 22 գյուղական համայնքներում:

Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բնագավառ

2017 թվականի ընթացքում մշտապես աշխատանքներ են տարվել << Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի, <<Վեղիա Ջուր>> ՓԲԸ-ի և համայնքների հետ՝ մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ:

2017 թվականին պետական բյուջեից հատկացված գումարներով մարզի համայնքներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Նոր Հաճն և Զարենցավան համայնքների բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում:

- Հրազդան համայնքի որոշ բարձրահարկ շենքերի վերելակների վերանորոգում:

- Քասախ և Արամուս համայնքների նոր թաղամասերի գազիֆիկացում:

- Լեռնանիստ և Սոլակ համայնքների փողոցային լուսավորության անցկացում:

- Աբովյան համայնքի արտաքին ջրահեռացման համակարգի կառուցում:

Կատարվել են մարզի Բյուրեղավան, Զառ, Նոր Գյուղ, Արգել, Քանաքեռավան, Պոռշյան, Հրազդան, Նոր Գեղի և Քասախ համայնքների աղբավայրերի փակման և մաքրման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները՝ 300.000 << դրամի չափով:

Ընթացքի մեջ է Հրազդան քաղաքում աղբավայրի կառուցմանն ուղղված <<Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում>> ծրագիրը:

Հաշվետու ժամանակահատվածում բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնին է հասցեագրվել 728 գրություններ և 24 դիմում-բողոքներ քաղաքացիների կողմից, որոնց սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ:

Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից կարևորվում են հետևյալները.

- ջրամատակարարման և ջրահեռացման ներհամայնքային ցանցի մաշվածությունը,
- կոյուղու մաքրման կայանների բացակայությունը,
- գերեզմանատների հատակագծերի բացակայությունը,
- բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների, տանիքների և կոմունիկացիաների վերանորոգումը:

Տրանսպորտի և ճանապարհաշնության բնագավառ

Մարզում ընդհանուր օգտագործման պետական ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 581.28 կմ, որից միջակետական նշանակության՝ 56.18 կմ, հանրապետական նշանակության՝ 274.8կմ և տեղական նշանակության՝ 250.3կմ:



<< 2017 թվականի պետական բյուջեի միջոցներից մարզի միջայի պետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ամառային և ձմեռային ընթացիկ պահպանության աշխատանքների իրականացման նպատակով իրականացվել են 489,0 մլն դրամի աշխատանքներ, այդ թվում ամառային պահպանման համար 383.1մլն. և ձմեռային պահպանման համար 105.9մլն դրամ: Նշված ծրագրի շրջանակներում << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է ճանապարհների 332.8 կմ ձմեռային և 284.4 կմ ամառային ընթացիկ պահպանման աշխատանքներ:

<< Կոտայքի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ամառային և ձմեռային ընթացիկ պահպանման նպատակով 2017 թվականին << պետական բյուջեով հատկացվել է 106.4 մլն դրամ: Հատկացված գումարի շրջանակներում հնարավոր է եղել Կոտայքի մարզայի պատվիրատվությամբ իրականացնել ճանապարհների 100.2 կմ ամառային և 129.4 կմ ձմեռային ընթացիկ պահպանման աշխատանքներ:

Մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների կարգավորման նպատակով 2017 թվականին << պետական բյուջեից հատկացված միջոցներով իրականացվել են Արինջ և Նոր Երզնկա համայնքների փողոցների ասֆալտապատման աշխատանքները:

2017 թվականին << պետական բյուջեի միջոցներով իրականացվել են.

- Զրառատ-Մեղրաձոր-Հանքավան ճանապարհի 1-ին կմ-ի վթարված կամրջի վերանորոգում - 51.0մլն. դրամ,

- Երևան-Սևան-Իջևան-Աղերբեջանի սահման մայրուղու 28 կմ հատվածի վերանորոգում՝ 2.8 միլիարդ դրամ և 43-րդ կմ-ի վթարված կամրջի վերանորոգում՝ 70.0 մլն դրամ:

<< Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում>> վարկային ծրագրով 2016 թվականին սկսվել և 2017թ-ին ավարտվել են <1-Հրազդան-Հ55(Հրազդանի կենտրոնական ճանապարհ) 3կմ հատվածի հիմնանորոգում՝ 905,0 մլն դրամով և <6-Նոր Գեղի-Արգել-Արգական-Հրազդան ավտոճանապարհի 13 կմ հատվածի հիմնանորոգում՝ 2,6 մլրդ. դրամով:

Ընդհանուր առմամբ 2017 թվականին մարզում ճանապարհաշինության և ճանապարհների պահպանման նպատակով աշխատանքներ են իրականացվել հետևյալ ուղղություններով.

Հանրապետական ճանապարհների պահպանում

489,0 մլն դրամ

Մարզային ճանապարհների պահպանում

106.4 մլն դրամ

Համայնքներում առաջնահերթ խնդիրների կարգավորում

27.5 մլն դրամ

Միջայի պետական և հանրապետական ճանապարհների հիմնանորոգում

6.426 մլրդ դրամ

Ընդհանուրը

7.049 մլրդ դրամ

Մարզի բնակավայրերը այլ մարզերի հետ կապվում են գործող 17 միջմարզային երթուղիների միջոցով, որոնց աշխատանքները կազմակերպում է << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը:

Տրանսպորտի բնագավառում մարզայի պատարանի կողմից կազմակերպվել են ներմարզային 36 ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներ, իսկ մարզի 3 քաղաքներում (Հրազդան, Արգական, Եղվարդ) գործում են ներհամայնքային 6 երթուղիներ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՏՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

2017 թվականի ընթացքում կատարվել են մարզայի պատարանի կողմից իրականացվող նախաձեռնությունների, աշխատանքային խորհրդակցությունների, հանդիպումների ու



քննարկումների, Կոտայքի մարզպետի այցելությունների լուսաբանման աշխատանքները (շուրջ 130 թողարկում):

Շարունակական աշխատանքներ են տարվել մարզպետարանի պաշտոնական կայքի տարբեր ենթահամակարգերում առկա տեղեկատվության խմբագրման, ինչպես նաև որոշակի կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ:

Կոտայքի մարզպետարանի kotayk.mtad.am պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնում տեղադրվող հաղորդագրությունները հիմնականում ուղեկցել են մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից պատրաստվող կամ լրատվամիջոցների կողմից թողարկվող տեսանյութերով:

Մարզպետարանի պաշտոնական կայքում պարբերաբար տեղադրվել են մարզպետարանի աշխատանքային ծրագրերը, տարեկան և ընթացիկ հաշվետվությունները, մարզպետի, համայնքների դեկավարների և ավագանու որոշումները:

Սահմանված կարգով իրականացվել են մարզի խորհրդի նիստերի լուսաբանման աշխատանքները:

Ապահովվել է համագործակցություն ինչպես մարզային, այնպես էլ հանրապետական զանգվածային լրատվամիջոցների և տեղեկատվության ոլորտում գործող տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:

Շարունակաբար կատարվել է մարզի համայնքների կայքերի դիտարկման, վերլուծության և վերջիններիս գործունեության բարելավմանը միտքած առաջարկությունների մշակման աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ 2017 թվականին, միջին ամսեկան ցուցանիշով, մարզպետարանի պաշտոնական կայքի այցելուների թիվը աճել է գործեթ 35 %-ով:

ՆԵՐՔԻՆ ԱՌԴԻՒՄԸ

Համաձայն 2017թ-ի ներքին առողջական ծրագրի իրականացվել է թվով 29 առողջության, որից 1-ը՝ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, 4-ը՝ 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում, 24-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններում:

Առողջիտի արդյունքներով արձանագրված թերությունները, բացթողումները և անհամապատասխանության դեպքերը քննարկվել են, որի հիման վրա տրվել են համապատասխան հանձնարարականներ (գործողությունների ծրագիր)՝ դրանց վերացման և հետագա գործունեությունը բարելավվելու ուղղությամբ:

2017 թվականին իրականացված առողջիտների արդյունքներով թվով 1 ՊՈԱԿ-ի ֆինանսավորման ծավալներից նվազեցվել է 180 հազար դրամ, իսկ 376 հազար դրամը վերականգնվել է ՊՈԱԿ-ի հաշվարկային հաշվին:

ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Տարվա փաստաթղթաշրջանառությունը կազմել է 29780 փաստաթուղթ, որից՝ 1816 դիմումներ քաղաքացիներից:

Դիմումները խմբավորվում են ըստ հարցի բնույթի՝

1. Ֆինանսական –967
2. բնակարանային – 260
3. աշխատանքի տեղավորման –35



4. առողջապահության – 354
5. գյուղատնտեսական – 53
6. տրանսպորտի և կապի – 26
7. այլ հարցեր – 121

Նոյնաբռվանդակ կրկնվող դիմումներ՝ 24:

Հաստատված ժամանակացույցի համաձայն մարզի տարածաշրջաններում մարզպետի կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցել են 263 քաղաքացիներ:

ՎԱՐՉԱՏՆԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել հողի հարկի և գույքահարկի 82000 անդորրագիր ստանալու հայտ, որից ըստ համայնքների կողմից ներկայացված հայտերի բաշխվել է 43000 անդորրագիր:

Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող գնումների անվանացանկով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով իրականացվել են համապատասխան գործառույթներ. կազմվել և հաստատվել են գնման հայտերը, որոնք ներառում են գնման առարկայի բնութագրերը, մասնավորապես կազմվել է ՇՀ գնման ընթացակարգի 6 հրավեր և ԲԸԱՀ ընթացակարգի 12 պայմանագիր:

Մարզպետարանի աշխատակազմի գնումների պլանը, գնումների պլանի փոփոխությունները, գնահատող հանձնաժողովների նիստերի արձանագրությունները, հրավերները և գնման հայտարարությունները տեղադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության gnumner.am/moderator համակարգ:

Նախապատրաստվել և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի հաստատմանն է ներկայացվել 22 գնման պայմանագիր:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառման նպատակով <CLIENT-TRESUARY> - <LSFinance> (ԳԳՕ) համակարգ, ինչպես նաև Էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության մոդուլ (PPCM) մուտք են արվել աշխատակազմի կարիքների համար ձեռքբերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրերը:

Ընդհանրացվել է աշխատակազմի համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման պահանջը. մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներին բաշխվել են տարբեր տեսակի գրենական պիտույքներ, գրասենյակային առարկաներ, «Հայփոստ» ՓԲԸ Հրազդանի մասնաճյուղից փոստային նամականիշեր և ծրարներ, տնտեսական պարագաներ և այլն:

Աջակցություն է ցույց տրվել ՌԴ մուտքի արգելվ ունեցող ՀՀ քաղաքացիներին սահմանված նմուշի համապատասխան դիմումների լրացման, անհրաժեշտ փաստաթղթերը ճիշտ ներկայացնելու հարցերում: ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայությունից ստացված ՌԴ մուտքի արգելվ ունեցող ՀՀ քաղաքացիների դիմումների վերաբերյալ պատասխանների մասին իրազեկել ենք դիմումատուներին:

ԿԱՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Մարզպետարան

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից ընդունվել են **301** որոշումներ, **210** կարգադրություններ, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից՝ **285** հրամաններ:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2017 թվականի հաստիքացուցակում առկա են 137 հաստիքներ, որից 9-ը՝ հայեցողական պաշտոններ են, 120-ը քաղաքացիական ծառայության



պաշտոններ և 8-ը տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններ: Պաշտոնի է նշանակվել 1 անձ՝ հայեցողական պաշտոնում: Պաշտոնից ազատվել 1 անձ՝ հայեցողական պաշտոնից:

Քաղաքացիական ծառայություն

« Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առկա են քաղաքացիական ծառայության 120 պաշտոններ, որից 6-ը թափուր են: Կայացել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ գրադարձնելու համար 3 մրցություններ, որից 2-ը՝ « ՔԾԽ-ում: Պաշտոնի են նշանակվել 4 քաղաքացիական ծառայողներ՝ 2-ը մրցութային, 2-ը՝ արտամրցութային կարգով: 3 քաղաքացիական ծառայողի պաշտոնավարման ժամկետը երկարաձգվել է մեկ տարի ժամկետով: Պաշտոններից ազատվել են 7 քաղաքացիական ծառայողներ, որից 3-ը անձնական դիմումի, 2-ը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» « օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» կետի (քաղաքացիական ծառայության պաշտոն գրադարձնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը, իսկ աշխատակազմի դեկավարի պաշտոնն գրադարձնելու՝ սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալը) և 2-ը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» « օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետի (սույն օրենքի 12²-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնին նշանակելը) համաձայն: Վերապատրաստվել են 42 քաղաքացիական ծառայողներ: Քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ են շնորհվել 3, իսկ առավելագույն դասային աստիճաններ՝ 10 քաղաքացիական ծառայողների: Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն գրադարձնելու համար կնքվել է 7 ժամկետային աշխատանքային պայմանագիր, լուծվել է 4-ը:

Առողջապահական բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային

Կազմակերպություններ

« Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 8 առողջապահական ընկերություններ և 27 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպություններ: Թափուր են 13 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 2 առողջապահական բաժնետիրական ընկերության տնօրենների պաշտոններ: Ազատվել են 3 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 2 առողջապահական բաժնետիրական ընկերության տնօրեններ: 1 առողջապահական բաժնետիրական ընկերության տնօրեն ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ «Խիստ նկատողություն» կարգապահական տույժի:

Կրթական, մշակութային և մարզական պետական ոչ առևտրային կազմակերպություններ

« Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 94 պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որից՝ 1 մշակույթի կենտրոն, 2 մարզադպրոցներ, 59 միջնակարգ դպրոցներ, 31 հիմնական դպրոցներ և 1 հատուկ (օժանդակ) դպրոց: Թափուր է 2 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոն: Նշանակվել են 42 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ: Ազատվել է 16 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ աշխատանքային պայմանագրերի գործողության ժամկետները լրանալու կապակցությամբ: 11 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ 2-ը՝ «Խիստ նկատողություն» և 9-ը՝ «Նկատողություն» կարգապահական



տույժի: Կայացել է 1 մարզական պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն գրադարձնելու համար մրցույթ:

Պաշտոնի է նշանակվել 1 մարզական պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ստուգանշվել են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 299 որոշումներ, 209 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի 283 հրամաններ: «Հ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 6-ի N1167-Ն հրամանի համաձայն մարզպետի թվով 508 իրավական ակտեր սահմանված կարգով առաքվել են «Հ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ իրավաչափության ուսումնասիրման համար, որոնց վերաբերյալ որևէ դիտողություն չի արձանագրվել»:

Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 67 համայնքների պահանջների 2988 և համայնքների ղեկավարների 10307 որոշումներ՝ արձանագրված թերությունների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ ներկայացնելով դրանք գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ: